Արձանագրություն N 2
<< ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

14 հունիսի, 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Է. Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ — Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԳԱ/՝ — Գ. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Գ. Հարությունյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ /ԳՊ/Մհմ/ — Լ. Ադամյան

1. <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2023թ.-ի հունիսի 14-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	«Լիգա Ինշուրանս»Ապահովագրական ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պ. 1, հեռ. +37460 62-20-20
2.	«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16, հեռ. 011/012 56 04 04
3.	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3.5, հեռ. +374 60 54-00-00

3. Հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

16 հունիսի 2023թ.
Ժամը՝ 12:00

4. Հայտի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակցի կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, սակայն ներկայացված հայտերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում -հայտարարության (Հավելված 1) մեջ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը չի ներկայացրել, փոխարենը ներկայացրել է Կենտրոնական բանկի գրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

- «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության (Հավելված 1) մեջ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին հղումը չի գործում: Ներկայացված գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված, ուստի գնային առաջարկը գնահատվեց բավարար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ մասի գ) ենթակետը:

- «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշված է միայն 7-րդ չափաբաժինը, այնինչ պետք է նշվեր, որ մասնակցում է 1-7 չափաբաժիններին, քանի որ այդ չափաբաժինների մասով ներկայացվել է գնային առաջարկ, ինչպես նաև չի ներկայացվել «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ի կողմից գնման հայտը ստորագրող անձին տրված լիազորագիրը և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին հղում: Ներկայացված գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված, ուստի գնային առաջարկը գնահատվեց բավարար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ մասի գ) ենթակետը:

5. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

6. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	*Գնման առարկայի անվանումը*	*Չափման միավորը*	*Քանակը*	*Գնման առարկայի գնման ընդհանուր գինը*	*Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը **					
					«Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ		«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ		«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	
					Գնային առաջարկը		Գնային առաջարկը		Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ
1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Տոյոտա Քամրի մակնիշի 032LL55 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	36000	25000	-	-	-	26000	-
2	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Հյունդայի Սոնատա մակնիշի 150SS60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	36000	25000	-	-	-	26000	-
3	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Հյունդայի Էլանտրա մակնիշի 122SS60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	34000	25000	-	-	-	26000	-
4	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Հյունդայի Էլանտրա մակնիշի 120SS60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	30000	25000	-	-	-	26000	-
5	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Ռենո Սանդեռո մակնիշի 121SS60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	30000	30000	-	-	-	26000	-
6	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Կիա Օպտիմա մակնիշի 130SS60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	45000	25000	-	36000	-	26000	-
7	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ Նիսսան Ուրվան մակնիշի 123SS60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար	դրամ	1	47000	16000	-	42000	-	49000	-

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

8. Հանձնաժողովը որոշեց հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև ներկայացնել իրական

շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին հղում համաձայն Գնումների մասին ՀՀ Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ. ենթակետի և ՀՀ Կառ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի թ. պարբերություն/:

9. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2023 թվականի հունիսի 20-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

20 հունիսի 2023թ.

Ժամը՝ 12:00

10. Հանձնաժողովն արձանագրեց, որ «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է շտկված Դիմում-հայտարարությունը և գնման հայտը ստորագրող անձին տրված լիազորագիրը: Սահմանված ժամկետում Մասնակիցների կողմից կայքէջի հղման փոխարեն, որպես անհամապատասխանությունների շտկում, ներկայացվել են 2023 թվականի ապրիլ ամսին Բանկի կողմից տրված գրություններ՝ համաձայն որոնց, որպես հիմնավորում, նշվում է, որ Բանկի կողմից իրականացվում են համապատասխան աշխատանքներ՝ իր կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքում հնարավոր սեղմ ժամկետում հրապարակելու նպատակով: Միաժամանակ Մասնակիցները տեղեկացրել են, որ անհամապատասխանությունների շտկման պահանջի իրականացման համար կրկին դիմել են Բանկ, սակայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրանցման ընթացքի վերաբերյալ այլ տեղեկատվություն չեն ստացել: Հանձնաժողովը որոշեց շարունակել գնահատման աշխատանքները:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

23 հունիսի 2023թ.

Ժամը՝ 12:00

11. <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել գնահատման նիստը և դիմել Ֆինանսների նախարարություն պարզաբանում ստանալու և գնահատման գործընթացը շարունակելու նպատակով՝ արդյո՞ք Կենտրոնական բանկի գրությունները կարող են համարվել հիմք կայքէջի հղման փոխարեն, գրությունը միաժամանակ ուղարկվել է նաև Արդարադատության նախարարություն:

12. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա գրություններն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

26 հոկտեմբերի 2023թ.

Ժամը՝ 12:00

13. Հանձնաժողովի նիստին բացակայում էր հանձնաժողովի նախագահ Է. Գրիգորյանը, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հանձնաժողովի նիստը նախագահեց նիստին ներկա հաջորդող թեկնածու Ն. Պետրոսյանը:

14. Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Վիճակագրական Կոմիտեն (այսուհետ՝ ԱՐՄՍՏԱՏ) Արդարադատության նախարարության 2023 թվականի հուլիսի 11-ի թիվ 25.9/32545-2023 գրությամբ (ստացված՝ 13.07.2023թ.) տեղեկացել է, որ ներկայումս Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության e-

register.am կայքում Կենտրոնական բանկի կողմից գրանցված իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկատությունն ինքնաշխատ եղանակով չի ստացվում և Կենտրոնական բանկի կողմից այդ ուղղությամբ իրականացվում են աշխատանքներ, ինչպես նաև առաջարկել է համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով դիմել Կենտրոնական բանկ և քննարկել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված սկզբունքի (ձևական պահանջները չարաշահելու արգելք)՝ գործով կիրառելի լինելու հնարավորությունը:

ԱՐՄՍՏԱՏ-ը 2023 թվականի հուլիսի 21-ի թիվ ՎԿ/3-08/1562-2023 գրությամբ դիմել է Կենտրոնական բանկ, և 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ 13.2-07/258-23 գրությամբ Կենտրոնական բանկը ԱՐՄՍՏԱՏ-ին տրամադրել է մասնակից ապահովագրական կազմակերպությունների իրական շահառուներ հանդիսացող անձանց անունները:

ԱՐՄՍՏԱՏ-ը Ֆինանսների նախարարության 2023 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 03/26/19949-2023 գրությամբ ստացել է պարզաբանում, որ «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ի, «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի մասով ներկայիս դրությամբ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը գնահատելիս պետք է հիմք ընդունվի Կենտրոնական բանկի տրամադրված տեղեկատվությունը:

Ուստի, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության 2023 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 03/26/19949-2023 գրությունը, որոշեց շարունակել գնահատման գործընթացը և մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

15. Ներկայացված հայտերի հիման վրա <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2023/5>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց **ընտրված մասնակիցներ** ճանաչել «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ -ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին՝ 5-րդ չափաբաժնի մասով:

Չճանաչել ընտրված մասնակիցներ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ին 6-րդ, 7-րդ, «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ-ին 5-րդ, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով:

16. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

17. Ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագրերը կնքվելու են անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ն. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ _____ Գ. Պետրոսյան

_____ Գ. Հարությունյան

_____ Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ _____ Լ. Ադամյան